

COVID-19-ի հետ կապված խաբեություններ և կեղծիքներ

Առողջապահական ճգնաժամերի ընթացքում, խաբեքները արագորեն եղանակներ են գտնում՝ խաբելու եղանակով մարդկանցից գումար կորզելու համար: Կորոնավիրուսի համավարակի ժամանակ, խաբեքներն օգտագործում են ավտոմատ զանգեր, սոցիալական լրատվամիջոցներում գրառումներ և էլեկտրոնային նամակներ՝ COVID-19-ի վերաբերյալ վախի, անհանգստության և խառնաշփոթից օգտվելու համար: Հանցագործները վաճառում են ապրանքներ, որոնք չեն աշխատում, գումար պահանջում այն ապրանքների համար, որոնք անվճար են և գողանում են անձնական տվյալները: Չգուշացեք նման խարդախություններից:



COVID-19-ի թեստավորման խաբեություններ

- **Տնային պայմանների համար նախատեսված թեստերը, որոնք վաճառվում են փողոցում կամ դռնից դուռ, խաբեություն են:** 2020 թ.-ի հունիսի 2-ի դրությամբ տնային պայմանների համար նախատեսված թեստերը միայն տրամադրվում են բժշկի կարգադրությամբ և առաքվում են պացիենտին փոստով:
- **Կորոնավիրուսի համար թեստավորումն բոլորի համար անվճար է** Լոս Անջելես շրջանում՝ անկախ ներգաղթային կարգավիճակից: Եթե դուք հիվանդ եք կամ անհանգստացած եք COVID-19-ի կապակցությամբ, խոսեք ձեր բժշկի հետ: Կարող եք նաև անվճար թեստ ձեռք բերել՝ այցելելով covid19.lacounty.gov/testing կամ զանգահարելով 2-1-1:
- **Իմացեք COVID-19 թեստավորման մասին [այստեղ](#):**

Կոնտակտներին (մտերիմ շփումներ) հայտնաբերելու խաբեություններ

- **Խաբեքները կարող են զանգահարել, այցելել, գրել կամ էլեկտրոնային նամակ ուղարկել՝ փորձելու տեղեկատվություն ստանալ:** Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը զանգահարում, գրում կամ էլեկտրոնային նամակ է ուղարկում COVID-19 ունեցող մարդկանց և այն մարդկանց, որոնց հետ նրանք կարող է շփված լինեն: Եթե զանգը Հանրային առողջապահությունից է, հեռախոսի Էկրանին կերևա “LA PublicHealth” կամ 1-833-641-0305 on the caller ID. Նրանք երբեք չեն հարցնի Ձեր ներգաղթային կարգավիճակի վերաբերյալ, սոցիալական ապահովագրության համարը կամ գումար պահանջեն: Եթե Դուք զանգ կամ հաղորդագրություն ստանաք Հանրային Առողջապահությունից, խնդրում ենք պատասխանեք կամ հետ զանգեք՝ օգնելու մեզ վերահսկել Լոս Անջելես Շրջանում COVID-19-ի տարածումը:

COVID-19-ի կեղծ բուժումներ եւ «հրաշագործ դեղեր»

- **Սննդային հավելումների եւ «բուժումների» գովազդներն ու խրախուսումները կարող են կեղծ կերպով պնդել, որ դրանք կանխում կամ բուժում են COVID-19-ը:**
- **Գոյություն չունի «պատվաստանյութին սպասողների ցուցակ»:** Թույլ մի տվեք խաբեքներին Ձեզնից գումար վերցնել՝ գրանցելու Ձեզ պատվաստանյութին սպասողների կեղծ ցուցակում:
- **Մինչտ խորհրդակցեք բժշկի կամ այլ հավաստագրված բուժաշխատողի հետ՝** նախքան որևէ դեղորայք կամ առողջապահական ապրանքը ընդունելը:

Ստացեք օգնություն

- **Բժիշկ գտեք.** զանգահարեք 2-1-1` Լոս Անջելես Շրջանի տեղեկատվական գիծ կամ այցելեք՝ [211LA ինտերնետային էջ](#):
- **Ձեռք բերեք ռեսուրսներ, ինչպիսիք են՝ սնունդը, դեղորայքը եւ այլ անհրաժեշտ պարագաները.** Չանգահարեք 2-1-1 կա այցելեք [211LA ինտերնետային էջ](#), կամ Հանրային Առողջապահության [ռեսուրսների ինտերնետային էջ](#):
- **Չեկուցեք COVID-19-ի հետ կապված հնարավոր խաբեություն եւ ստացեք օգնություն՝ փորձելով վերադարձնել ձեր գումարը.** կապ հաստատեք Լոս Անջելես Շրջանի Սպառողների և Գործարար Հարաբերությունների Վարչության հետ. dcba.lacounty.gov կամ 800-593-8222:
- **Չեկուցեք կասկածելի պնդումների մասին, որոնք արվում են թեստերի կամ բուժման ապրանքների վերաբերյալ.** զեկուցեք FTC-ին՝ ftc.gov/complaint կայքում:

Օգնության (Stimulus check) չեկերի խաբեություններ

- **Ձեզնից ԵՐԲԵՔ չի պահանջվի նախապես գումար վճարել, Պետական Օգնության Ձեր չեկը,** գործադրության ապահովագրության գումարը կամ սոցիալական ապահովագրության ամսական վճարում ստանալու համար:
- **Իմացեք ավելի,** թե ինչպես խուսափեք ձեր օգնության չեկի հետ կապված խաբեություններից՝ այցելելով [այստեղ](#):

Գների անհիմն (կեղծ) բարձրացում՝ COVID-19 համավարակի ժամանակ

- **Մի վճարեք ավելին, քան պետք է վճարեք ապրանքների եւ ծառայությունների համար.** Գների անհիմն բարձրացումն այն է, երբ Ձեզնից պահանջում են վճարել սովորական գնից 10% կամ ավելի բարձր՝ կարևոր ապրանքների կամ ծառայությունների ձեռք բերման համար:
- **Գների անհիմն բարձրացումն անօրինական է:** Իմացեք ավելին կամ զեկուցեք գների կեղծ բարձրացման մասին Լոս Անջելես Շրջանի Շրջանի [Գների բարձրացման տեղեկատվության էջում](#):

Կեղծ «օգնողներ», ովքեր առաջարկում են առաքումներ եւ

հանձնարարություններ կատարել

Խաբեբաներն առաջարկում է օգնել, երբ COVID-19-ի ժամանակ տանն եք, ապա Ձեր փողերը վերցնելով փախնում են:

- Կարևոր ապրանքների, օրինակ՝ սննդի և դեղորայքի առաքումը վստահեք ընկերոջը կամ հարևանին կամ օգտվեք հայտնի ընկերությունների առաքման ծառայություններից, կամ օգտվեք ստորև բերվող անվճար ծառայություններից որևէ մեկից.
- **Իմացեք, թե ումից եք գնում.** Որոշ [առցանց վաճառողներ](#) պնդում են, որ ունեն մեծ պահանջարկ ունեցող ապրանքներ, օրինակ մաքրող և բժշկական պարագաներ, երբ իրականում չունեն: Պատվիրեք ուղղակիորեն դեղատնից կամ խանութից և հարցրեք անվճար առաքման վերաբերյալ:
- **Իմացեք անվճար եւ ցածր գին ունեցող տարբերակների մասին:** Դուք կարող եք անվճար առաքումներ ստանալ Լոս Անջելես Շրջանի [խիստ Անհրաժեշտ Ծառայությունների Առաքման Ծրագրից](#), զանգահարեք 888- 863-7411:
- **Մի շարք ծրագրեր ամեն օր անվճար սնունդ են տրամադրում:** Գրանցվեք Լոս Անջելես Շրջանի [Լավագույն Ուտեստների Առաքման Ծրագրում](#), կամ քաղաքապետարանի Տարեցների սննդի ծրագրում [առցանց](#) կամ զանգահարելով (800) 510-2020. Ձեր տարածքում տարբերակներն իմանալու համար այցելեք [211LA](#), կամ զանգահարեք 211:

Կեղծ բարեգործություններ

- Շատ մարդիկ ցանկանում են օգնել իրենց համայնքի անդամներին, ովքեր տառապում են կամ հնարավոր է կորցրել են իրենց աշխատանքը կորոնավիրուսի հետևանքով: Ցավոք, այն մարդիկ, ովքեր ցանկանում են օգնել, կարող են տուժել խորամանկ խաբեբաներից:
- **Լավ ուսումնասիրեք եւ տեղեկություններ հավաքեք, [սվհարտվություններ](#) կատարելուց առաջ:**
- Թույլ մի տվեք որևէ մեկին ձեզ շտապեցնել սվհարտվություն կատարել և ստուգել, թե արդյոք բարեգործությունն օրինական է՝ փնտրելով այն Կալիֆոռնիայի Գլխավոր դատախազության [Բարեգործությունների գրանցամատյանում](#): Լրացուցիչ խորհուրդներ ստացեք խոհեմ կերպով սվհարտվություն կատարելու վերաբերյալ, այցելելով՝ ftc.gov/charity

Բժշկական ինքնության հափշտակություն եւ խաբեություններ

- **Խաբեբաները փորձում են գողանալ ապահովագրության թվերը, անձանկան տվյալները եւ գումար:** ԵՐԲԵԶ հեռախոսով, էլեկտրոնային նամակով կամ հաղորդագրությամբ մի տրամադրեք Ձեր Մեդիքեյր կամ Մեդիքալ ապահովագրությունների համարը կամ Սոցիալական Ապահովագրության համարը չբացահայտված (անհայտ) անձի:
- **Պետական գործակալությունները, օրինակ՝ Մեդիքեյրը, Մեդիքալը, Սոցիալական Ապահովագրությունը կամ ՆԵԾ-ը (IRS)** չի զանգահարի Ձեզ՝ որևէ բան վաճառելու նպատակով կամ առաջարկելու Ձեզ «գրանցվել» հեռախոսով: Նրանք չեն կապվի Ձեզ հետ Ձեր անձնական տվյալների համար, եթե նախապես նրանց թույլտվություն չեք տվել: Նրանք չեն այցելի նաև Ձեր տուն, եթե միյան չեն աշխատում [2020-ի մարդահամարում](#): Ահա մի քանի խորհուրդներ, թե ինչպես կանխել Կորոնավիրուսի հետ կապված [Մեդիքեյրի կեղծիքը](#) և [Սոցիալական ապահովագրության խարդախությունները](#):
- **Անջատեք, երբ ավտոմատ զանգեր եք ստանում** “պետական գործակալությունից”: Եթե այս [ապօրինի ավտոմատ զանգերը](#) շարունակվեն, պահանջեք նրանց տվյալները, որպեսզի կարողանաք զեկուցել նրանց մասին [Պետական Առևտրային Խորհրդին](#): Դուք կարող եք նաև իրական առևտրային զանգերի թիվը նվազեցնել՝ միանալով [“Մի Չանգահարեք Ցուցակին”](#):

Եղեք տեղեկացված՝ հավաստի տեղեկատվությամբ

Չգուշացեք կեղծ լուրերից և կեղծիքներից, ինչպես նաև COVID-19-ի շուրջ կատարվող խարդախություններից

Կորոնավիրուսի վերաբերյալ նորություններ

- Այցելեք ph.lacounty.gov/media/Coronavirus, գրանցվեք՝ ստանալու մամուլի հաղորդագրությունները կամ հետևեք մեզ @lapublichealth
- Այցելեք Շրջանի COVID-19 ինտերնետային էջ covid19.lacounty.gov
- Օգտվեք CDC-ի վեբկայքից www.cdc.gov/coronavirus

Խաբեության զգուշացումներ

Տեղեկացված եղեք վերջին խաբեությունների և նախազգուշական միջոցառումների վերաբերյալ, որ դուք և Ձեր ընտանիքը պետք է իրականացնեք.

- Տեղեկացեք վերջին խաբեությունների վերաբերյալ Լոս Անջելես Շրջանի Սպառողների և Գործարար Զարաբերությունների՝ [Սպառողների նախազգուշացումներից](#):
- Այցելեք Լոս Անջելես Շրջանի [Ներգաղթյալների Գործերի Գրասենյակ COVID-19](#) ինտենետային էջ:
- Գրանցվեք Թոշակառուների Ամերիկայի Ասոցիացիայի (AARP) [Կեղծիքների Նախազգուշացումներ ծրագրում](#):
- Գրանցվեք՝ ստանալու Ֆեդերալ Առևտրային Խորհրդի [Նախազգուշացումներ սպառողների համար](#):

Իմացեք ավելին խարդախությունների եւ առողջապահական ծառայությունների սպառողների համար այլ կարեւոր խնդիրների վերաբերյալ, այցելելով՝ ph.lacounty.gov/hccp